ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ info@charentsavan.am <mailto:charentscavan@mail.ru>

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մայիսի 2012 թվականի N 30-Ն

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 06-Ի ԹԻՎ 50-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով մի խումբ բնակիչների դիմումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի դրույթներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հասարակական նպատակով կառուցապատման և օգտագործման իրավունքով հատակագծվող հողամասերի համար սահմանել վարձավճարի հետևյալ չափերը՝
   1) 1-10քմ մակերեսների համար տարեկան 14400 դրամ,
   2) 11-20քմ մակերեսների համար տարեկան 28800 դրամ,
   3) 21-49 քմ մակերեսների համար հրապարակային սակարկության մեկնարկային գին սահմանել 1քմ-ի համար տարեկան 960 դրամ,
   4) 50-99 քմ մակերեսների համար հրապարակային սակարկության մեկնարկային գին սահմանել 1քմ-ի համար տարեկան 600 դրամ,
   5) 100 քմ և ավել մակերեսների համար հրապարակային սակարկության մեկնարկային գին սահմանել 1քմ-ի համար տարեկան 360 դրամ:
2. Թույլատրել մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքած կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքի վարձակալության պայմանագրերում կատարել սույն որոշումից բխող փոփոխություններ այն քաղաքացիների հետ, որոնք չունեն զոյացած պարտքեր կամ կազմել են պարտքի մարման ժամանակացույց:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -8 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ասատրյան Մանուկ
Մելիքյան Մաքսիմ
Գարապետյան Էլմիրա
Բաբայան Վալերի
Մալխասյան Նորիկ
Վարդանյան Նորիկ
Ստեփանյան Սարիբեկ
Պալյան Արարատ
Մարտիրոսյան Երվանդ

ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Կ.Տ.